https://doi.org/10.52027/18294685-ank2023.2

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԿԱՐԵՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄ ՉԱՐԵՆՑԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանի Ազգային գրադարանի Մատենագիտության և գրադարանագիտության բաժինը հրատարակության է պատրաստել «Եղիշե Չարենց։ Մատենագիտություն։ Պրակ Ա» հատորը՝ պատասխանատու խմբագիր՝ Դավիթ Գասպարյան և խմբագիր՝ Հայկանուշ Ղազարյան։

Չարենցի ամբողջական մատենագիտության կազմումը կարևորագույն աշխատանք է, և դրա իրականացումը՝ չափազանց արդիական հատկապես այն առումով, որ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը հրատարակության է պատրաստում մեծ բանաստեղծի երկերի ժողովածուն՝ 13 հատորով, որտեղ մատենագիտական հստակ ու համակարգված տվյալների առկայությունը մեծապես կարող է օգտակար լինել այդ հատորները կազմողներին՝ տարբեր հարցերում առավել հստակ կողմնորոշվելու համար։

Արդեն իսկ մատենագիտությունն օգտակար է եղել հրատարակված 1-ին հատորի աշխատանքներին, և առավել մեծ է նպաստը 2-րդ հատորին, որովհետև մատենագիտությունը շրջանառության մեջ դրեց Չարենցի «Կոմունարների պատը Փարիզում» պոեմի առանձին հրատարակության գոյության փաստը՝ հնարավորություն տալով ճշտել տեքստային տարբերություններն ու կազմել առավել անաղարտ բնագիր։ Հարցն այն է, որ նախկինում այդ հրատարակությունը համարվում էր չհայտնաբերված և չի արտացոլվել Չարենցի երկերի և ոչ մի հրատարակության մեջ։

Մյուս կողմից՝ հայտնի է, որ և՛ Չարենցի երկերի հրապարակումներն են շատ, և՛ Չարենցի մասին գրականությունն է բավական պատկառելի։ Ուստի, չարենցագիտությունը շատ հաճախ դժվարանում է հաղթահարել այդ ծավալը՝ կապված առավել չափով այն հանգամանքի հետ, որ ստիպված է լինում չափազանց երկար որոնողական աշխատանքներ կատարել, թերթել բազմաթիվ հավաքածուներ, և երբեմն՝ ուղղակի չնկատել շատ կարևոր նյութեր։

Մատենագիտությունը գալիս է լրացնելու այդ բոլոր բացերն ու խնդիրները։

Ինչպես նշվում է հրատարակության առաջաբանում՝ «Եղիշե Չարենցի մատենագիտության Ա. պրակը ներառում է 1914 թվականից մինչ օրս հրատարակված նրա ստեղծագործությունները (առանձին գրքերով եւ հատորային հրատարակություններ), նրա կազմած, խմբագրած եւ թարգմանած գրքերը, նրա կյանքին ու ստեղծագործությանը նվիրված մենագրությունները, գիտաժողովների նյութերի ժողովածուները, օժանդակ ցանկերը։ Ա. պրակը ունի հետեւյալ կառուցվածքը.

I. ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԳՐՔԵՐԸ

II. ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԿԱԶՄԱԾ, ԽՄԲԱԳՐԱԾ, ԹԱՐԳՄԱՆԱԾ ԳՐՔԵՐԸ

III. ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ ԳՐՔԵՐԸ

IV. ՕԺԱՆԴԱԿ ՑԱՆԿԵՐ»։

Շատ կարևոր է, որ մատենագիտության կազմողները չեն սահմանափակվել միայն Ազգային գրադարանում պահվող նյութերի համակարգմամբ։ Ամենայն բարեխղճության, այս դեպքում նույնիսկ կարելի է ասել՝ պատասխանատվությամբ ուսումնասիրվել են ամենատարբեր երկրների ամենատարբեր գրադարանների գրացուցակները, համակարգվել է իսկապես ահռելի նյութ, որն առարկայորեն ի ցույց է դնում Ա. պրակի բովանդակային շրջանակում մասնավորեցված բոլոր հատույթների ամբողջական հարստությունը։

Եվ, որ շատ կարևոր է, այս մատենագիտությունը լոկ տվյալային արձանագրումների մակարդակով չի արվել։ Հընթացս կատարվել է նաև բանասիրական բնույթի մեծ աշխատանք,

արվել են շատ կարևոր դիտողություններ ու դիտարկումներ, որոնցից շատերը նոր ուսումնասիրությունների համար կարող են մեկնակետային արժեք ունենալ:

«Եղիշե Չարենց: Մատենագիտություն: Պրակ Ա» հատորը մեծարժեք աշխատանք է: